

1915 № 960 0310
Հրատարակւիլն «Ն Ի Բ Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ե Բ Ի»
ԸՅԿերութեան № 26

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՔԱՐԱՑԱԾ ՔՈՅՐԸ

(Հ Է Ք Ի Ա Թ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

○○○○○○○○



Թ Ի Ֆ Լ Ի Զ
Ցպարան Ն. Ազանեանի, Պօլից. 7
1915

891.995

Խ-64

6021

Հրատարակություն «ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ»,
Գնկերության № 26

30 MAY 2011

1. 995

1-64

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՔԱՐԱՑԱԾ ՔՈՅՐԸ

(Ն Է Ք Ի Ա Թ)



○○○○○○○○

ИНСТИТУТ
ОРИЕНТАЛИСТИКИ
С.-ПЕТЕРБУРГ
СССР

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Ն. Աղանեանի Պոլիգ. 7
1915



ՔԱՐԱՑԱԾ ՔՈՅՐԸ

(Հեփաթ)

Ա. Խնկոյանի

I

Ժամանակով երկու եղբայր և մի բոյր
են լինում:

Ծնողները սիրում էին միայն տղա-
ներին, նրանց երես էին ապիս, ասած-
ները կատարում էին, իսկ աղջկայ վրա
ուշադրութիւն չէին դարձնում: Նա հագել
էր, չէր հագել, կերել էր, չէր կերել, բնել
էր, չէր բնել, նրանց համար միևնոյնն էր:

Աղջիկը մի կարճ ու կոլոտ, անգեղ-
տգեղ աղջիկ էր:

Կարճ ու կոլոտ, անգեղ-տգեղ աղջիկը
տանը տիտիկ չէր անում: Սիրում էր կա-
պոյտ երկինքը, տարագիր ամպերը, դաշտ
ու անտառ, ծառուծաղիկ և թռչունների
երգը:

Որ ամպերին էր նայում, մտքով մի



59863-66

սարից միւսն էր թռչում, որ թռչունների ծլւլոցն էր լսում, ինքն էլ մի ծլւլան թռչուն էր դառնում ու թռչունների նման երգում:

Եղբայրները երես չէին տալիս, ծաղրում էին, ծիծաղում էին նրա վրա, ծեծում էին և աւելորդ անունն էլ դրել էին յիմար: Վատ էին վարւում աղջկայ հետ նաև ծնողները:

Խեղճ աղջիկը կարծես իրենց տան մէջ խորթ լինէր:

Այդ աղջիկը մի եղբայր էլ ունեցաւ: Ամենից շատ ուրախ էր քոյրը: Նա օրերով չէր հեռանում փոքրիկ եղբօր օրօրոցի մօտից, երգում էր, օրօրոցը օրօրում, չէր թողնում, որ եղբայրը լաց լինի:

Մի օր, հայրը, չըգիտեմ ում վրայ բարկացած, բռնեց աղջկան մի լաւ ծեծեց:

— Յիմար աղջիկ, դու այստեղ ինչ ես անում, — ասաւ հայրը, — օրօրոցը շուռ կը տաս, երեխին կը փասես, կորի այստեղից:

Աղջիկն է՝ պրծնում է հօր ձեռքից ու լաց լինելով վազում է իրենց աւերակ եկեղեցին, որ գտնւում էր գիւղից դուրս, մի քչքչան առակի մօտ:

Խղճուկ աղջիկը աչքերը տրորելով վազում ընկնում է երեսի վրա ու լալիս: Էդպէս բռնը տանում, քնում է:

Քնում է, բայց հանգիստ չի քնում. հա վեր է թռչում, քնի մէջ խօսում, էս կողքի, էն կողքի վրա շուռ գալիս: Լուռ հեկեկոցները վեր վեր էին հանում նրա լղարիկ մարմինը: Այդպէս է մարում փոթորիկը անձրևից յետոյ:

Էդպէս աղջիկը փռած մնում է գետնին: Վրա է հասնում աստղալից գիշերը, իր թևի տակն է առնում քչքչան աղբիւրը, սարերի կատարները, խիտ անտառը, աւերակ տաճարը և խղճուկ աղջկան:

Յանկարծ աղջկայ ականջին է հասնում մի խօսակցութիւն: Նա բաց է անում աչքերը, տեսնում է, որ իր գլխի վերևը կանգնած են երեք հոգի և իրենց տան մասին խօսում:

Դու մի ասի դրանք հրեշտակ են լինում:

— Մարդիկ սառն են, մարդիկ դառն են, — ասում էր մի հրեշտակը: Նրանք իրենց չարն ու բարին չեն ճանաչում և դրա համար էլ պատժւում են: Այ, տեսնում էք, այստեղ պառկած է մի խեղճ աղջիկ: Սրա եղբայրները, հայրն ու մայրը հանգիստ քնել են իրենց տանը, իսկ սրան ծեծել, դուրս են արել: Այդ ընտանիքը շատ անբախտ կը մնայ: Երկու տղան էլ դեռ ջահել-ջահել պէտք է մեռնեն, ծնողները մի-

չև մահ-գերեզման պէտք է անմխիթար մնան:

—Լսիր,—եղբայր հրեշտակ,—բո դատաստանը շատ խիստ դատաստան է. որ տղաները մեռնեն, ծեր ծնողներին ո՞վ կերակրի, օր ծերութեան ո՞վ նրանց պահպալու պաշտպանի, մեռնելիս՝ ո՞վ նրանց թաղի,—ասում է միւս հրեշտակը:

—Լսիր, եղբայր,—ասում է երրորդ հրեշտակը, չի՞ կարելի թեթեւացնել այդ պատիժը և մի որդուն ծնողներին բաշխել:

—Որ այդպէս է, ընկեր հրեշտակներ,—ասում է նորից առաջին հրեշտակը, եկէք մի որդուն ծնողներին բաշխենք:

—Եկէք զարթեցնենք այս աղջկան և մեր որոշումը ասենք:

Հրեշտակները զարթեցրին աղջկան: Նրանցից մէկը ձեռքը դրեց աղջկայ գլխին ու ասաւ.

—Աղջիկս, սրանից յետոյ յիշիր իմ խօսքերը. բո մեծ եղբայրը որսի ճամփին կը մեռնի, միջնակ եղբայրդ ջրով կը խեղդւի, իսկ պուճուր եղբայրդ այն օրը կը մեռնի, որ օրը պսակի գնայ: Եկեղեցի պսակ գնալու ժամանակ, կօշիկը հագնելիս օձը պէտք է գուրս գայ ոտնամանի միջից և կծի նրան: Հիմա բոլոր եղբայրներիդ բախտը քեզ յայտնի է: Գուցէ դու եղբորդ

ազատես: Բայց լաւ իմանաս, երբ որ դու այս գաղտնիքը մէկին պատմես, իմացիր որ իսկոյն քար կը դառնաս: Այսպէս ասաւ հրեշտակը ու երեքով թևերին տւին ու թռան:

Աղջիկը ինքնիրեն ասում է.

—Վայ, Աստուած, ականջներս խլանան, այս ինչեր լսեցի: Մի՞թէ ծնողներս պէտք է անմխիթար մնան: Ինչո՞ւ համար ես ծընւեցի, ինչու համար մանուկ չեմ մեռել,—ասաւ նա, վերկացաւ ու լալով, ողբալով վազեց տուն:



Օրերն իրար ետեւից անցնում էին:

Մեծ եղբայրը որսորդ էր, բայց շատ անխիղճ որսորդ. պատահած կենդանուն, պատահած թռչունին չէր խնայում, էլ չէր ասում սրանք էլ հայր և մայր են, ձագերի տէր են: Մեծն ու փոքրը իրարից չէր շոկում:

Միջնակ եղբայրը ձկնորս էր, սա էլ ոչ մեծ ձկանն էր խնայում, ոչ փոքրին: Խիղճ ասած բանը չունէր:

Քոյրը խնդրում, աղաչում էր եղբայրներին. — իմ եղբայրներ, ձեր քոյրը ձեզ մատաղ, թողէք որսորդութիւնը, թողէք ձրկնորսութիւնը, դրանք մեղք բաներ են, ձեզ համար լաւ չեն, ձեր գլխին փորձանք կը բերեն:

Բայց զրտեղ, յիմար քրոջը լսողն ո՞վ էր, եղբայրները ծաղրում էին նրան, վրան ծիծաղում, ծեծում, հալածում:

Քոյրը տեսաւ որ իրեն լսող չկայ, իր սէրը գցեց միայն փոքր եղբոր վրա:

Եղբայրը քանի դեռ փոքր էր, օրօրոցում պառկած, քոյրը միշտ նանիկ էր ասում ու իր նանիկն այսպէս էր վերջացնում:

Նանիկ, եղբայրս, իմ, նանիկ,
Նանիկ, ազիզ իմ ջանիկ,
Նանիկ, կարմիր ու կանաչ,
Քեզ պահապան աջն ու խաչ:
Դու բօյ քաշի, դու աճի,
Բօյդ դառնայ մի նոճի:
Նանիկ, ազիզս, նանիկ,
Երբոր կանենք հարսանիք,
Քո պսակովն ինձ էլ տար,
Ոչ քուն ունեմ, ոչ դադար:
Վրէժ Տիրոջ աջն ու խաչ,
Նանիկ, կարմիր ու կանաչ:

Զհասկանալով բանի էութիւնը, լսողներն ասում էին ի՞նչ է խօսում յիմարը, եղբայրը դեռ օրօրոցումն է, ինքը հարսանիքից է պատմում, ինչքան յիմարն է այս աղջիկը:

Միանգամ քոյրը պինդ բռնում է մեծ եղբոր փեշերից, խնդրում, աղաչում է նրան:

— Այ եղբայր, իմ աչքի լոյս մեծ եղբայր, այսօր մի գնա որսի, սիրտս վատ բան է վկայում, վատ երազ եմ տեսել, բոտաների հողը լինեմ, ինձ խնայիր, ինձ չես խնայում, բո ծեր հօրն ու մօրը խնայիր, քեզ խնայիր, բո կանաչ, կարմիր արևին խնայիր:

Որսորդ եղբայրը չը լսեց քրոջը, հրեց, դէն շարտեց նրան, հրացանն ուսեց և գնաց անտառ: Առաւօտից մինչև իրիկուն դէս-դէն թափառեց, մացառների մէջ ընկաւ, ելաւ սարերի լանջերը, հակառակի պէս ոչ մի որսի չը պատահեց:

Յոգնած-բեզարած, գլուխը կախ արած, որսորդը դատարկ տուն էր վերադառնում: Մէկ էլ տեսաւ, որ իրենից հեռու, թփերի մէջ, մի սիրուն եղջերու է կանգնած: Տեսաւ եղջերւին, հրացանը ձեռքն առաւ, ընկաւ յետևից:

Արագավազ եղջերուն կարծես դիտմամբ ուզում էր որսորդին չարացնի: Մի քիչ վազում էր ու կանգնում, գլուխը յետ էր շրջում, մարդու նման նայում, բթածակերը լայն բաց անում և շնչում: Որսորդը չէր կարողանում հրացանն արձակել, եղջերուն նրանից բաւականին հեռու էր: Որսորդը բարկացաւ ու աւելի թափով վազեց եղջերւի ետևից: Այդ ժամանակ ժայռի տակից արձակեց առիւծը և պատռապատառ արեց որսորդին:

Լուրը տանք միջնակ եղբօրից:

Սա էլ գնացել էր ձուկ որսալու: Կանգնել էր գետափի ժայռի վրա ու ուռկանը գցել գետը: Ուռկանը դուրս քաշելիս, ոտը

սայթաքել էր և ինքը ընկել վարարած գետի յորձանքների մէջ ու խեղդւել:

Այդպէս կորան երկու եղբայրն էլ: Հրեշտակի ասածը կատարեց: Հէրն ու մէրը մնացին լալով, ողբալով, բայց ո՞ր մեռածն է արցունքով ետ եկել, որ եղբայրները ետ գային:



Դրանից յետոյ քոյրը աչքի լոյսի պէս էր պահում իր փոքր եղբորը, պահապան հրեշտակ էր դարձել նրա համար և մտքում ասում էր թէ ես քար կը դառնամ ու չեմ թողնի, որ օձը եղբորս կծի:

Եղբայրը մեծացաւ, բայց քաշեց, դարձաւ մի չինարի ծառ: Ծնողները նրան նշանեցին: Եկաւ պսակելու օրը:

Եղբայրը չէր ուզում, որ քոյրը իր հետ գնայ հարսնացւենց տուն:

— Ես կամաչեմ, որ ուրիշ գիւղացիք իմանան թէ փեսայի քոյրը այսքան տգեղ է, յիմար է, — ասում էր եղբայրը:

— Իմ ազիզ եղբայր, իմ ձեռի վարդ, իմ ջան ու ջիկեար, որ այդպէս է, մի ասի թէ ես քո քոյրն եմ, ասա սա մեր աղախինն է, ծառայող աղջիկ է, խնդիրս մի թողնի անկատար, տար ինձ քեզ հետ: Կապերով որ կապես, ես տանը մնացողը չեմ, հետդ կը գամ, շունդ կը լինեմ, ետեիցդ վազ կը տամ, — լալով, աղաչելով ասում էր խղճալի աղջիկը:

Եղբայրը վերջապէս համաձայնեց: Քոյրը մի գոյգ կօշիկ կարել տւեց, ճիշտ այնպէս, ինչպէս եղբօր պսակի կօշիկները և խնամոնց գիւղը գնալիս՝ հետը տարաւ:

Պսակից առաջ եղբայրը շորերն ու կօշիկները հանեց, պառկեց, որ հանգստանայ: Երբ որ եղբայրը բնեց, քոյրը բերեց իր մօտի կօշիկները դրեց եղբօր մահճակալի մօտ, միւս կօշիկները առաւ ու դուրս վազեց: Դուրս վազեց ու ասաւ.

— Հիւ մի տեսնեմ, ճիշտ որ օձը եկել է: Տեսաւ, ինչ տեսնի, դեռ լաւ էր, որ լեղին չըճաքեց, մի օձ գալարւած, կծիկեղած, նստել է ոտնամանի մէջ. Աղջիկը սարսափած ոտնամանը շարտեց վառած թոնրի մէջ. Օձը թոնրի բոցերի մէջ ճայթեց: Սաստիկ ճայթոցից կերակրի ամանները թափւեցին թոնիրը, բոլոր ներկայ եղողները տեղերից վեր թռան: Եղբայրն էլ բռնից զարթոնեց: Բոլորը հարց ու փորձ արին թէ այս ի՞նչ պատահեց:

Հարսնացուն թագւորին ասաւ: — Ես տեսայ, որ քո այս աղախինը կօշիկդ բերեց գցեց թոնիրը: Երևի այդ աղջիկը կախարդ է, ուզում է մեր գլխին մի օր փորձանք բերի:

Բարձրացաւ եղբայրը, յարձակւեց քրորոջ վրա, բացատրութիւն պահանջեց, բայց խեղճ աղջիկը մոլորուել մնացել էր, չըզիտէր ի՞նչ ասէր:

— Է լաւ, — ասաւ եղբայրը, — պսակիցս յետոյ կիմանամ թէ սա ի՞նչ նշան էր, ե-

Թէ չասես, ճամփին ես քեզ կսպանեմ:
Եղբայրը պսակեց: Հարսանիք արին,
կերան խմեցին, ուտողաց անուշ: Հարսնի-
քաւորները գնացին իրենց տները: Փեսան
էլ հարսի և քրոջ հետ միւս օրը աներանց
տանից դուրս եկան, որ գան իրենց գիւղը:

Եղբայրը ճամփին պահանջում էր քրո-
ջից Թէ ի՞նչու կօշիկը գցեց թոնիրը: Տե-
սաւ որ քոյրը ոչինչ չի ասում, դաշոյնը
հանեց, որ նրան սպանի: Այն ժամանակ
արդէն հասել էին աւերակ եկեղեցու մօտ:

Քոյրը չէր իմանում ինչ անի,—Թէ
կասէր պատճառը, քար կը դառնար, Թէ չէր
ասի, եղբայրը կսպանէր:

Խեղճ աղջկայ ճարը որ կտրւեց, եղ-
բօրը խնդրեց Թէ մի կէս ժամ ժամանակ
տուր, եթէ չասեմ այն ժամանակ ինձ
սպանի:

Եղբայրն էլ ասաւ Թէ լաւ, կէս ժամ
ժամանակ եմ տալի:

Քոյրը չոքեց աւերակ եկեղեցու առւի
մօտ, աչքերը բարձրացրեց ու սկսեց ա-
ղօթել:

—Սիրուն աշխարհ, պայծառ արև, ոս-
կի լուսին, դուք ինձ համար հայր ու մայր
եղաք, դուք ինձ շոյեցիք, գուրգուրեցիք,
սրտիս վիշտը փարատեցիք:

Խենթ ու խելառ քամիներ, իմ հարա-

զատ եղբայրներ, ինձ հետ խաղ արիք, մա-
ղերս ծածանեցիք, հիւսերս քանդեցիք, ամ-
պերը բշեցիք, երկինքը պարզեցիք:

Նախշունիկ աստղեր, վառած կանթեղ-
ներ, անուշիկ քոյրեր, անուշ ժպտացիք ու
ինձ կանչեցիք, երբ ես փախայ իմ հօր ձե-
ռիցը, համբոյր ղրկեցիք, ինձ մխիթա-
րեցիք:

Կարկաշիւն առու, պաղպաջիւն առու,
դու կեանք բաշխեցիր, դու լեզու առար,
հետս խօսեցիր, դու ինձ ասացիր վիշտդ
մոռացիր:

Եւ դուք բոլորդ սրտով ինձ մօտ էք,
իմ վիշտը գիտէք, վշտիս ծանօթ էք: Դէհ,
դուք ասացէք, իմ մեղքը ի՞նչ է, որ եղ-
բայրս ինձ սպանի:

—Այ հրեշտակներ, ի՞նչու պատժեցիք,
փոխէք վճիռը, օգնութեան եկէք, եղբայրս
մեղք է, կը խղճահարւի, ի՞նչու սպանէ,
ի՞նչու քարանամ, կեանքը բաղցր է, ու-
ղում եմ ապրեմ:

Վերջին անգամ քոյրը դիմեց եղբօրն
ու ասաւ:

—Կեանքից մի զրկի: Որ ես քո ուզա-
ծը կատարեմ, պատմեմ Թէ ի՞նչու կօշիկը
թոնիրը գցեցի, իսկոյն քար կը դառնամ և
դու էլ խղճի հանգստութիւն չես ունենայ,
շարունակ կը տանջես:

Եղբայրը չըհաւատաց նրան ու ասաւ.
—Ո՛հ, պէտք է ասես:

Քոյրը բերանը բաց արեց ու մէկ-մէկ պատմեց հրեշտակների վճիռը. պատմեց թէ կօշիկի մէջ նստած էր օձը, որ պէտք է իրեն կծէր: Այդ պատմութիւնը վերջացրեց թէ չէ, իսկոյն եղբօր ու հարսի աչքի առաջ խեղճը քար դարձաւ: Մացառներ բոսան ու քարը մէջ տեղ առան:

Եղբայրն ու հարսը լուռ, զարմացած կանգնած էին, ապշել մնացել էին թէ ինչ կատարւեց իրենց աչքի առաջ:

Եղբայրը ուշքի եկաւ, սկսեց իր գըլ-խին խփել, մազերը պոկել:

—Վայ,—ասաւ,—քոյրս մեզ համար քար դարձաւ, մենք չըհասկացանք բանի էութիւնը: Ա՛յ թէ ի՞նչու նա ինձ հետ հարսանիք եկաւ, եկաւ, որ իմ կեանքը ազատէ: Այո՛, նա իմ կեանքը ազատեց, բայց ես պատճառ եղայ, որ նա քար դարձաւ. ինչո՞ւ չհաւատացի ես նրան: Ա՛խ, բուրիկ ջան, բուրիկ, մեծերից լսած խօսք է. «Քոյրն ասաւ ախպէր ունեմ, ախպէրն ասաւ քոյր չունեմ»: Մին էլ աչքերը սրբեց, տեղից վերկացաւ, ձեռքերը դէպ երկինք բարձրացրեց ու ասաւ.

—Օ՛, երկինք, երդուում եմ քո առաջ, կինս թողնեմ, բախտս թողնեմ, բունս կրտ-

րեմ, երկաթէ տրեխ հագնեմ, երկաթէ գաւազան բռնեմ, արար աշխարհ ման գամ, մի ճար անեմ, դեղ ու դարման բերեմ, քրոջս առողջացնեմ, քրոջս կեանք բաշխեմ, խիղճս հանգստացնեմ:

Մնաս բարով, իմ կեանքի ընկեր, իմ քնքուշ աղաւնի, եթէ կուգես կաց ու ինձ սպասիր,—շուտ կը գամ, ուշ կը գամ կամ բոլորովին չեմ գայ, էդ էլ Աստծու բանն է,—մնալ, չըմնալը—դու գիտես,—ասաւ իր հարսին:

—Իմ քաջ արծիւ,—բուռ-բուռ արցունք թափելով՝ ասում է նորահարսը: Ես այստեղ քրոջդ քարի մօտ կսպասեմ քեզ: Ես չէի իմանում թէ սա քո քոյրն է, ես չէի իմանում թէ սա քեզ օձից ազատել է: Ես կը մնամ այստեղ, այս քարին պահապան, կուլամ, կերերամ, արցունք կը թափեմ, Աստուած կը կանչեմ, որ դու բարով գնաս, բարով գաս, մի ճար գտնես, քրոջդ կեանք բաշխես, որ խղճերս մեզ չըտանջէ:

59863-66

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЗНИ
Советского Союза
СССР



IV

Եղբայրը թռաւ հեծաւ իր ձին, Աստ-
լած կանչեց ու գնաց: Թողեց քրոջը՝ բար
դարձած, թողեց կնոջը՝ աչքը ճամփին, քշեց
ձին, անցաւ սարեր, անցաւ ձորեր, անդ
ու անդաստան, տափ ու տափաստան, գը-
նաց: Գնաց ու մտաւ մի հովիտ՝ բուր ու
բուրաստան: Իջաւ ձիուց, թամբը վեր ա-
ռաւ, ձին թողեց արօտ, ինքը հաց կերաւ,
եափնջին քաշեց, փաթաթեց, քնեց:

Եղբայրը քնեց ու երազով ընկաւ: Մի
պառաւ կնիկ երազումն ասաւ.

— Խեղճ տղայ, աշխարհն առել ես ու-
տիդ տակ, որ մի դեղ գտնես, քրոջդ կեանք
տաս: Դու համարձակ եղիր, տղամարդ ե-
ղիր, համբերութիւն ունեցիր, նպատակիդ
կը հասնես: Որ վեր կենաս, ձիուդ գլուխը
դարձրու դէպի արեւելք: Ճամփին կը պա-
պատահես իմ քրոջը, նա էլ ինձպէս պա-
ռաւ է: Աղաչիր նրան, որ քեզ համար մի
զոյգ գաթայ թխի և մի հաւ խորովի: Որ
այդ բաները կստանաս, էլի դէպի արեւելք
գնա՛, ճամփին կը տեսնես, որ երկու ծեր
մարդ նստած են ու մարդկանց բախտ են
բաժանում: Գաթաներն ու հաւը տուր այդ
մարդկանց և խնդրիր, որ քեզ օգնեն: Եթէ
քեզ մի ճար անեն՝ նրանք կանեն:

Տղան քնից զարթնեց, վեր կացաւ, հե-
ծաւ իր ձին ու դէպի արեւելք:

Շատ գնաց թէ բիշ գնաց, շատն ու քի-
չը Աստլած գիտէ, հասաւ մի տնակի,
տնակի մէջ տեսաւ մի պառաւ, որ նստել
ու թել էր մանուկ: Բարեւ տւեց, խնդրեց-
աղաչեց, որ իրեն համար մի շուխտ գա-
թայ թխի ու մի հաւ խորովի ու բախտ
բաժանող ծեր մարդկանց տեղն էլ սովո-
րեցնի:

Զարմացաւ պառաւը ու հարցրեց.

— Ա՛յ բալայ, ա՛յ ջահել-շիւան տղայ, դու
նրտեղից գիտես թէ ես գաթայ կարող եմ
թխել, հաւ խորովել բախտ բաժանող-
ների համար:

Տղան էլ պատմեց թէ քո քոյրն ասաւ:

Պառաւը մտածեց, մտածեց ու ա-
սաւ.

— Լաւ, ա՛յ շիւան տղայ: Էս գիշեր դու
ինձ հիւր եղիր, քնիր, հանգստացիր, քո ու-
զածներն առաւօտը ինձանից կստանաս:

Տղան գիշերը մնաց պառաւի տանը:
Երբ լոյսը բացւեց, լոյսը բացւի ձեր ամեն-
քի վրա, վեր կացաւ տղան, լւացւեց,
երեսը դարձրեց դէպ աղօթարանը, ա-
ղօթք արաւ, ստացաւ պառաւից գաթէքն

ու հաւը, ձին հեծաւ ու ճամփա ընկաւ։ Օրը պայծառ օր էր, տաք և դուրեկան։ Օդում ճախրում էին տեսակ, տեսակ թռչուններ։ Թռչունները իրանց երգերով գովում էին օրւայ գեղեցկութիւնը, ոսկեգօծ արևը։ Անտառում ու սարի վրա եղանակը փոխւեց, դուրս եկաւ մի սև ամպ, տաքածւեց, փուեց, ծածկեց կապոյտ երկինքը։ Գեղեցիկ արևը ծածկեց իր երեսը։ Քանի գնաց տղայի ճամփէն դժւարացաւ, վեր կացաւ քամին, դարձաւ փոթորիկ, շուաց, ոռնաց, բարերն էր պոկում, ծառերն էր ջարդում, մութը կոխեց, աչք աչքի չէր տեսնում։

Սկսեց անձրևը. երկինքը ասես պատուեց. գորգոցը ընկաւ, որոտում էր որոտը, ճկճրկում էր կայծակը, սարի լանջից հեղեղներ էին գալիս. երիտասարդը եափնջին գլխին քաշած, ձիու մէջքին հեծած, գնում էր ու գնում, սարերն էր բարձրանում։ Բարձրացաւ, գնաց, գնաց, հասաւ սարի գագաթը։ Սարի ձիւնապատ գագաթին վառւում էին հազարաւոր կրակներ, այնտեղ էլ փոթորիկ կար, ձիւնախառն անձրև էր գալիս, դարձեալ որոտ, փայլակ, կայծակ։ Յանկարծ սարը դղրդաց, ճաքեց կայծակը, ձիուն էլ, տղին էլ գլորեց գետին, բոլոր կրակները հանգան։

Աստուած այդ օրը թշնամու ցոյց չըտայ։ Տղան շատ մնաց գետնին, քիչ մընաց, մի ժամանակ ուշքի եկաւ, աչքերը բաց արաւ, գլխի վերևը տեսաւ կապոյտ երկինքը և պայծառ արևը։ Նա դեռ չէր հասկանում ինքը ողջ է թէ մեռած։ Յանկարծ յիշեց իր քրոջը, յիշեց թէ ինչու համար է եկել, յիշեց որ ինքը գնում է ծերերի մօտ։ Ուժ ու կող արեց, ոտի կանգնեց։ Տոպրալը տնտղեց, տեսաւ որ գաթաներն ու հաւը տեղն են։ Գնաց ձիու մօտ, որ իրենից շատ հեռու էր ընկած. կայծակը խփել էր ձիուն, ձին սեացած ընկել էր գետին։

Տղան ափսոսաց, բայց ճարն ինչ. առաւ տոպրակը, վերցրեց, դրեց թևի տակ, ու գնաց իր ճամբէն, իր դժար ճամբէն։

Ձիւն, սառոյց և անդունդ։ Միւս օրը լուսադիմին, արևածագից առաջ, սարի գլխից տեսաւ, որ սարի ստորոտում նստել են երկու ծեր մարդ։

Մտքումն ասաւ, կան չկան սրանք են բախտ բաժանողները։

Սարի լանջով ցած եկաւ ծերերի մօտ։ Ծերերը նստել էին մի գրքի առաջ ու գրում էին։ Նրանք երբ որ տեսան Տըրում էին։ Նրանք երբ որ տեսան Տըրին, բացականչեցին. — Գնա՛, գնա՛. այստեղից հեռացիր, դու արժանի չես բախտ ըստանալու։

Տղան երեք անգամ մօտեցաւ բախտ բաժանողներին և երեք անգամ խնդրեց, որ ընդունեն իր բերած նւէրը, խրատ տան թէ ինչ անի, որ քրոջը կեանք տայ:

Վերջին անգամ տեսան, որ շատ յոգնած է ու տանջւած ծերերը խղճացին տղին ու ասացին:

— Լսիր, այ պատանի, կը գնաս դէպի արևելք: Կը գնաս, կը գնաս, կը հասնես սրբազան Մասիս սարը: Էդ սարը երկու գլուխ ունի. մէկը մեծ, միւսը փոքր: Մեծ Մասիսի ստորոտում կայ մի ձոր, ձորի մէջ կը գտնես մի դուռ: Այդ դռնով կը մտնես ու կերթաս օձերի թագաւորութիւնը: Օձերի թագաւորը քուզածը կը կատարի: Այդպէս ասացին ծերերն ու անյայտացան:

Տղան այդ որ լսեց, էլ չըհանգստացաւ, ելաւ ընկաւ ճամփա, գնաց ու գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչը Աստուած գիտէ, վերջապէս, երեկոյեան դէմ նրա աչքի առաջ բացւեց մի ընդարձակ դաշտ, դաշտի միջին փեշերը փռած, գլուխն ամպերի մէջ հսկայ ծերի նման բազմել էր մի սար, երկու գլխանի: Տղան շատ ուրախացաւ, ասես աշխարհն իրեն տւին: Առաւօտեան հասաւ սարի ստորոտը, գլխարկը վեր առաւ, չոքեց և երեք անգամ սարի կուրծքը համբուրեց: Յետոյ

նստեց հանգստացաւ և մտքի տակ ընկաւ թէ ինչպէս գտնի օձերի թագաւորութեան դուռը: Արևը որ բաւականին բարձրացաւ ու ոսկեղօծեց ձիւնապատ սարի լանջերը, այսպէս մի հրաշք տեսաւ տղան:

Երկինքը փայլակտեց, վերևից պէծեր թափւեցին աջ ու ձախ, մի հրեղէն օձ թրուաւ արքայական փայլուն թագը գլխին: Պոչով խփեց փոքր Մասիսի կատարին, ճեղքեց նրան և գնաց Մեծ Մասիսի կուրծքը մտաւ:

Տղան այդ տեղ գլխի ընկաւ, որ այդ օձը օձերի արքան է: Գնաց գտաւ օձերի թագաւորութեան դուռը, ներս մտաւ դռնից, ու համարձակ առաջ գնաց: Ճամփէն մուտն էր և երկիւղալի: Պահապան վիշապները այն է յարձակուում էին տղի վրա հենց այնպէս ողջ-ողջ կուլ տալու: Բայց զարմացել էին այդ հողածնի համարձակութեան վրա և դրա համար նրա առաջ ճամփա էին բաց անում: Տղան գնաց օձերի, վիշապների միջով, գնաց հասաւ թագաւորի պալատը: Պալատի պարիսպը արծաթից էր, իսկ պալատը ոսկուց էր թափած: Դարբանների առաջ պոչերի վրայ նստել էին օձ թագաւորի թեւաւոր նազիր, վէզիրները: Սրանք որ տեսան հողածնին, շրջապատեցին նրան ու տարան իրենց արքայի

մօտ: Արքայի դահլիճը զարդարւած էր խորասանի գորգերով: Գորգերը նախշած էին գոյնգգոյն թանկագին քարերով:

Սենեակում դրած էր փղոսկրեայ գահը, բանդակները ոսկուց: Գահին բազմել էր օձերի արքան, գլխին ադամանդէ թագը: Արքայի շուրջը անշարժ կանգնել էին դահիճները, զէնքերը ձեռքերին:

Տղին տարան գահի առաջ: Օձերը Փըշշում էին ու սուլում, օղակ, օղակ գալարւում, կծկւում էին ու բացւում, նրանք սպասում էին իրենց թագաւորի նշանին, որ հողածնին պատառ-պատառ անեն: Բայց տղան իրեն չըկորցրեց, չըվախեցաւ, համարձակ աչքը գցել էր թագաւորի աչքին ու պատմում էր թէ ինչու համար է եկել:

Զարմացած մնաց օձը մարդու համար-ձակութեան վրա, ու էսպէս ասաւ.

— Փնօք ու պատիւ քեզ, այ մարդ, որ մեծ նեղութիւններով եկել ես այստեղ հասել:

Հէնց քո քաշած չարչարանքի համար ներում եմ մեղքերդ, քո պատճառով իմ հպատակ օձին կրակը գցեց քո բոյրը: Դու ուզում ես որ քո քարացած քոյրը կենդանանայ: Ես, միանգամից չեմ ասի թէ ինչպէս քո բրոշդ կեանք բաշխես:

Ես երկու բան կառաջարկեմ քեզ, որն

ուզում ես ընտրիր. ուզում ես քեզ տամ անթիւ հարստութիւն, ոսկի, արծաթ, անգին քարեր, այնպիսի հարստութիւն, որ ոչ մի հողածին չունենայ:

Կամ կուգես տամ օձի իմաստութիւնը, կը հասկանաս բոլոր կենդանիների լեզուն, տերէների սօսափիւնը, բուսնոց կանաչի սրսրփանքը, աղբիւրների բջջոցը, նրանք քեզ կասեն, ինչ միջոցով քո բարացած բրոշը կեանք բաշխես:

— Ինձ պէտք չեն ոսկի, արծաթ, ոչ էլ անգին քարեր, — ասաւ տղան: Տուր ինձ օձի իմաստութիւնը, որ աշխարհէ աշխարհ ման գամ, մի ճար գտնեմ, բրոշս կեանք տամ:

— Հայ, հայ, այ ադամաորդի, — ասաւ օձի թագուհին, — դժար տեղը կապեցիր, որ էդպէս է արի այս բաժակից խմիր ու գնա. տեսնում եմ որ դու սրտանց կուգես բրոշդ կեանք տաս. ադամաորդին ազահ ու ծակ աչք կը լինի. բայց կեցցէ քո սիրտը, կեցցէ քո սէրը:

Տղան մօտեցաւ, խմեց բաժակից և հենց որ աչքերը բաց արաւ, իրեն տեսաւ լոյս աշխարհում. սարերի սար երկգլխանի Մասիսի լանջերին:

Փայլում էր վերից պայծառ արեւը, կապտին էր տալիս ջինջ երկինքը, ճախ-

րում էին թեաւորները, սւսւում էր անտառը, շարժւում էր ծովի պէս Մասիսի եղեգնուտը, խփում էր գետնից անմահական աղբիւրը, բշշբում ու մրմնջում:

Տղան երեք անգամ ծունր դրեց, երեք անգամ համբուրեց սրբազան սարի կուրծքը, նստեց, հանգստացաւ, մտքի տակ ընկաւ, բունը տարաւ, նա քնեց սարերի սար երկզլխանի Մասիսի կրծքին:

Երազի մէջ տեսաւ, որ քոյրը կենդանացել է, իրեն դրել է օրօրոցն ու երգում է.

— Նանիկ, եղբայրս, նանիկ,
Նանիկ, ջանիկս, նանիկ:
Դու բօյ բաշի ու աճի,
Բօյդ դառնայ մի նոճի
Նանիկ, կարմիր ու կանաչ,
Քեզ պահապան աջն ու խաչ:
Նանիկ, ազիզս, նանիկ,
Երբոր կանես հարսանիք,
Քո պսակովն ինձ էլ տար....

Էլի տեսնում է, ինչպէս թուր վիզը գցած բաշում է ձիու ետևից քրոջը, գալիս է աւերակ եկեղեցու մօտ, սուրը հանում է որ նրան սպանի, ինչպէս քոյրը պատմում է օձի մասին և եղբօր ու հարսի ա-

ռաջ քար է դառնում: Երազում տեսնում է իր ճամփորդութիւնը, բաշած նեղութիւնը, օձերի աշխարհը և օձ թագաւորի ասածը թէ Մասիս սարը կը տայ բո մուրազը: Երազում ծունկ է չոքում Մասիս սարի առաջ, համբուրում է սարի կուրծքը և խնդրում է դեղ ու դարման քրոջ համար: Գիշերւայ մի ժամանակ գալիս են երկնքից երեք աղաւնի և իրենց լեզուով խօսում:

— Անուշիկ քոյրեր, երկնի ոգիներ. այս ջահել-ջիւան տղան քարացած քրոջ եղբայրն է, խեղճ տղջիկը եղբօր սիրուն բար դարձաւ: Բայց այս տղան էլ իր մեղքը քաւեց, ինչ նեղութիւն, ինչ չարչարանք քաշեց, քարէքար ընկաւ, սարէ սար ընկաւ, գնաց մոլթ աշխարհը օձերի թագաւորութիւնը: Երբ օձերի թագաւորը խղճաց սրան ու իր քար դարձած քրոջ վրա, եկէք մենք էլ խղճանք, ասաւ մի աղաւնին:

— Այո, ես հակառակ չեմ,— ասաւ երկրորդ աղաւնին:

— Որ դուք ուզում էք, իմ քոյրեր, ես էլ կուզեմ,— ասաւ մեծ աղաւնին: Թող առաւօտեան վաղ վեր կենայ այս տղան, հաւաքի բաժակի մէջ սրբազան սարի ցօղի կաթիլները, սարի կրծքից բղխող աղբիւրի

Նրից վերցնի, տանի սրսկի բրոջ բարը,
բոյրը նորից կեանք կառնի: Այդպէս ղուն-
ղունացին Մասիսի աղանիները, ծափ
տւին ու թռան: Դրանք նախկին հրեշտակ-
ներն էին:



Զարթնեց տղան, թռաւ տեղից: Լոյսը
բացւի ամեն մի լաւ մարդու վրա, լոյսը
բացւել էր. կարմիր արշալոյսը ոսկի էր
ցանել Մասիսի սրբազան լանջերին: Գա-
գաթի ամպերը կարմրել էին, բարձրա-
նում էր գոլորշին: Ծաղիկների թերթիկ-
ները շաղակուղ շողշողում էին. բրշ-
քշում էր աղբիւրը, դայլայլում էին Մա-
սիսի թռչունները: Տղան հասկանում էր
բոլորի լեզուն, նրանք ասում էին. «Քարա-
ցած աղջիկը կեանք կառնի»:

Տղան հաւաքեց բաժակի մէջ ծաղիկ-
ների շաղը, անմահական աղբիւրից ջուր
վերցրեց և երգելով ճամփայ ընկաւ: Լսե-
ցին նրա երգը ամպերը, լսեցին թռչուն-
ները, լսեցին խենթ և խելառ քամիները,
ընկերացան տղին, որ գնան տեսնեն թէ
ինչպէս աղջիկը կեանք կառնի:

Շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչը
Աստուած գիտէ, վերջապէս եղբայրը ե-
կաւ հասաւ այն աւերակ եկեղեցին, որտեղ
բոյրն էր քարացել, որտեղ նորահարս
սպասում էր:

Հասաւ ու Մասիսի ցօղով բրոջ բարը ցօ-
ղեց, անմահական ջուրը սրսկեց վրան, բարը
խսկոյն բացւեց և նրա միջից դուրս եկաւ

մի գեղեցիկ աղջիկ, իր քոյրը: Գլխին կար
ծաղկէ պսակ, հագին խառ ատլաս շորեր:
Ճուռոցներն թռչունները, ուրախացան քա-
մինները, ուրախութիւնից լաց եղան ամ-
պերը, փայլեց արեւը և եօթգլխանի ծիա-
ծանք իջաւ քրոջ ճակատին:

Հառաչեց քոյրը, աչքերը տրորեց ու
ասաւ.

— Էս ինչքան եմ քնել, — ասաւ ու համ-
բուրեց եղբօրն ու հարսին:

Եղբայրն ու հարսն էլ շատ ուրախա-
ցան, գրկեցին համբուրեցին քրոջը: Յետոյ
վեր կացան ու գնացին իրենց տուն: Հար-
սանիքը հիմա էր, որ հիմա... մարդ ու կնիկ
սրբի տեղ պաշտում էին իրենց ազատա-
րար քրոջը:

Վ Ե Ր Ջ

„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Դատցուկ — Ամերան Դարեշանիձէ, փոխ. Ա.թ. 25 կ.
Խնկոյեանի 10 »
2. Սէյրի — Դերձակի աշակերտը, վոդելիլ 10 »
3. Աղւէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ —
պսակ — պատկերազարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Դալաւեան — Կապիկներ, բնագիտ. զրոյց 10 »
5. Մարկ Տէյն — Մահաւան օղակը. պատմաձեռն,
թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիսկովիչ — Պատիկ նաւաստին. պատ-
մաձեռն, թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան — Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներից 20 »
8. Է. Սէտոն — Տոմպոն — Վերնիպեգի գայլը. պատ-
մաձեռն հերոս կենդանիների կեանքից, թարգ-
մ. Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Ջիլքերտ — Առասպելական հե-
րոսներ. թարգմ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուրէն Դարբիէլեան — Ուկրաինի թագաւորը.
Կէտի մասին, բնագիտական զրոյց 10 »
11. Մարգարի աղջիկն ու խորհրդաւոր վար-
պետը. Իտալական հեքիաթ. Ռուսերէնից
թարգմ. Յովհ. Թումանեան 10 »
12. Խ. Բ. Բաքալեան — Նոր ընկերուհի, Մանկա-
կան պիէս, մէկ արարածով: 10 »
13. Գ. Մեսեան — Ոսկեպղղը, արեւելեան աւանդ. 10 »

14. Փր. Փօկս—Մի ժամայ նախարարը,
պատմաձք թարգմ. Աթ. Խնկոյեանի . 15 »
15. Զիպօն և Պիպօն . 25 »
16. Բ. Նիպլինգ—Կոտուկօ, պատմաձք թարգմ.
Նիկ. Սարգսեան . 15 »
17. Դը-Ամիրջիս—Կարմիր մեխակ, պատմաձք,
թարգմ. Բ. Վարդանեան . 8 »
18. Աղաբաբ—Թուխսը, մանկական հեքիաթ . 12 »
19. Սօֆիա Գալաշեան—Այգեպանի մօտ . 10 »
20. Ուրդա—Տափաստանը, պատմաձք . 10 »
21. Ս. Տէր-Աւետիքեան—Ուխտաւորները, Ան-
տառի գիւտը . 8 »
22. Ս. Ս.—Պատահական ընկերութիւն . 4 »
23. Նփրեմ Սարգսեան—Փըռթկանը . 4 »
24. Ինֆանցիել—Թշնամիներ թարգ. Սօֆ. Գալս-
տեանի . 8 »
25. Կ. Մետրոպոլիտի—Զուրը, պատմաձք . 4 »
26. Ա. Խնկոյեանի—Քարացած Բոյրը, հեքիաթ . 8 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“.



<< Ազգային գրադարան



NL0396722

9946

9m

6

1
2

ԳԻՆՆ Է 8 ԿՈՊ.